ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Մարտունի,
Շահումյան 2, Հեռ. 0262-40005

N 383

21 օգոստոսի 2014թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ուղարկվում է Մարտունի համայնքի ավագանու 14.08.2014 թ. կայացած թիվ 6 նիստի հաստատված արձանագրությունը, 14 թերթի վրա:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ Ժ/Պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գ. Ոսկանյան
4-11-56

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-06

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2014 Թ. ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ:*
*Նիստին մասնակցում էին համայնքի 10 ավագանիներից 7-ը՝ Ա. ՁԻՐՈՅԱՆ, Ա. ՄՈՍՈՅԱՆ, Ա. ՄԵԼԻՔՅԱՆ, Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ե. ԴԱՎԹՅԱՆ, Խ. ԴԱՎԹՅԱՆ:*
*Նիստը վարում էր քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ:*
*Քարտուղարությամբ՝ Գ. ՈՍԿԱՆՅԱՆԻ:*

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՑ 54. <<Մարտունի համայնքի բյուջեի 2014 թ. 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու մասին>> ավագանու որոշումը.

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՑ 55. << Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՑ 56. <<Մարտունի համայնքի բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու համաձայնություն տալու մասին>> համայնքի ավագանու 18.11.2013 թ. թիվ 124 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՑ 57. <<Համայնքային սեփականություն հանդիսացող Q-240 մակնիշի գազի կաթսան, 2 պոմպերը և էլեկտրական վահանակը հոլանդական աճուրդի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին >>ավագանու որոշումը.

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՑ 58. <<Մարտունի համայնքի 2014 թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՑ 59. Սահմանամերձ գյուղերի ազատամարտիկներին օգնելու նպատակով Երկրապահ կամավորականների միության Մարտունու տարածքային բաժնին գումար տրամադրելու մասին

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՑ 60. <<Դիմումների քննարկում>>:

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝ կողմ՝ 7, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետի ժ/պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի քաղաքային համայնք, Ք. Մարտունի, Շահումյան 2
Հեռ. (0 262) 4 00 55, martuni.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2014 թվականի N 54 -Ն

<<Մարտունի համայնքի բյուջեի 2014 թ. 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու մասին>> ավագանու որոշումը.

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մարտունի համայնքի բյուջեի 2014 թ. 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Կողմ` 7, դեմ 0, ձեռնպահ 0:

Մարտունու քաղաքապետի ժ/պ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Համայնքի ավագանիներ Ա. ԶԻՐՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի քաղաքային համայնք, Ք. Մարտունի, Շահումյան 2
Հեռ. (0 262) 4 00 55, martuni.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2014 թվականի N 55

<<Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Նկատի ունենալով, որ Մարտունի համայնքի թվով 10 բնակիչներ հրաժարվել են իրենց սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողերից և այդ հողերի նկատմամբ համայնքը գրանցել է սեփականության իր իրավունքը, բացի այդ օտարվել են համայնքային սեփականություն հանդիսացող հողեր և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մարտունի համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված հետևյալ փոփոխությունները՝
1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի ցանկը լրացնել նոր ձեռք բերված գույքերով.
ա) վարելահող՝ 1,083 հա,
բ) խոտհարք՝ 0,226 հա,

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի ցանկը պակասեցնել օտարված գույքերի չափով.
ա) խառը կառուցապատման հողամաս՝ 0,2144 հա
բ) բնակելի կառուցապատման հողամաս՝ 0,16738 հա
գ) բնակավայրի այլ հողեր՝ 0,0392 հա

դ) հասարակական կառուցապատման հողեր՝ 0,0055 հա

Կողմ՝ 7, դեմ 0, ձեռնպահ 0:

Մարտունու քաղաքապետի ժ/պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՁԻՐՈՅԱՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի քաղաքային համայնք, Ք. Մարտունի, Շահումյան 2
Հեռ. (0 262) 4 00 55, martuni.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2014 թվականի N 56 -Ն

<<Մարտունի համայնքի բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու համաձայնություն տալու մասին>> համայնքի ավագանու 18.11.2013 թ. թիվ 124 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով <<Մարտունու թիվ 3 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի 27.06.2014 թ. թիվ 18 գրությունը.

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մարտունի համայնքի ավագանու 18.11.2013 թ. թիվ 124 որոշման մեջ <<Մարտունի քաղաքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում <<Խոհարար>> բառից հետո լրացնել <<5.1 խոհարարի օգնական 0,5 միավոր, դրույքաչափը՝ 30.000 դրամ:
2. <<Ընդամենը>> տողի հաստիքային միավոր սյունակի 12,86 թիվը փոխել 13,36 թվով:

Կողմ՝ 7, դեմ 0, ձեռնպահ 0:

Մարտունու քաղաքապետի ժ/պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի քաղաքային համայնք, Ք. Մարտունի, Շահումյան 2
Հեռ.՝ (0 262) 4 00 55, martuni.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2014 թվականի N 57

Համայնքային սեփականություն հանդիսացող Q-240 մակնիշի գազի կաթսան, 2 պոմպերը և էլեկտրական վահանակը հոլանդական աճուրդի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին ավագանու որոշումը.

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Նկատի ունենալով, որ համայնքային սեփականություն հանդիսացող Q-240 մակնիշի գազի կաթսան, 2 պոմպերը և էլեկտրական վահանակը ենթակա չեն շահագործման, 2013 թվականին 2 անգամ կազմակերպված դասական աճուրդներում հայտեր չեն ներկայացվել գույքերը գնելու համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Q-240 մակնիշի գազի կաթսան, 2 պոմպերը և էլեկտրական վահանակը աճուրդ վաճառքի հանել հոլանդական աճուրդի տարբերակով:
2. Մեկնարկային գինը սահմանել 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:
3. Աճուրդային նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 75.000 (յոթանասունհինգ հազար) դրամ:

Կողմ՝ 7, դեմ 0, ձեռնպահ 0:

Մարտունու քաղաքապետի ժ/պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՁԻՐՈՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի քաղաքային համայնք, Ք. Մարտունի, Շահումյան 2
Հեռ. (0 262) 4 00 55, martuni.gegharquniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2014 թվականի N 58 -Ն

<<Մարտունի համայնքի 2014 թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին>> ավագանու որոշումը:

ՁԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <<Նվազագույն աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքը.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մարտունի համայնքի 2014 թ. բյուջեի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա) <<Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում>> (բաժին 01, խումբ 1, դաս 1) 2014 թ. նախահաշվի 4112 հոդվածից՝ 600.000 դրամ, 4222 հոդվածից՝ 2.500.000 դրամ, 4241հոդվածից՝ 400.000 դրամ, 4269 հոդվածից՝ 300.000 դրամ,

բ) <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>>(բաժին 01, խումբ 6, դաս 1) 2014 թ. նախահաշվի 4267 հոդվածից՝ 1.000.000 դրամ,

գ) <<Այլ մշակութային միջոցառումներ>> (բաժին 08, խումբ 2, դաս 4) 2014 թ. նախահաշվի 4267 հոդվածից 2.000.000 դրամ,

դ) Պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 1.534.000 դրամ,ընդամենը՝ 8.334.000 դրամ տեղափոխել,

ա) <<Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում>> (բաժին 01,խումբ 1, դաս 1) 2014 թ. նախահաշվի 4111 հոդված-2.890.000 դրամ,

բ) Մարտունու մշակույթի տան (բաժին 08, խումբ 2, դաս3) 2014 թ. նախահաշվի 4111 հոդված-485.000 դրամ,

գ) <<Արտադպրոցական դաստիարակության>> (բաժին 09, խումբ 5, դաս 1) 2014 թ. նախահաշվի 4111 հոդված-1.638.000 դրամ,
դ) <<Նախադպրոցական կրթություն>> (բաժին 09, խումբ 1, դաս 1) 2014 թ. նախահաշվի 4239 հոդված-2.216.000 դրամ,

ե) Մարտունու Կենտրոնական գրադարանի (բաժին 08, խումբ 2, դաս 1) 2014 թ. նախահաշվի 4111 հոդված-615.000 դրամ,

վ) <<Աղբահանության>> (բաժին 05, խումբ 1, դաս 1) 2014 թ. նախահաշվի 4213 հոդված-260.000 դրամ,
է) <<Երաժշտական դպրոցներում ուսուցում>> (բաժին 09, խումբ 1, դաս 2) 2014 թ. նախահաշվի 4239 հոդված-230.000 դրամ.: Ընդամենը՝ 8.334.000 դրամ:

2. Մարտունի համայնքի 2014 թ. բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները <<Հողի օտարումից մուտքեր>> հոդվածով ավելացնել 4.500.000 դրամ:

3. Մարտունի համայնքի 2014 թ. բյուջեի ազատ մնացորդից 4.500.000 դրամ տեղափոխել <<Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում>> նախահաշվի 5112 հոդված՝ Մարտունու քաղաքապետարանի կտուրը կապիտալ վերանորոգելու նպատակով:

Կողմ՝ 7, դեմ 0, ձեռնպահ 0:

Մարտունու քաղաքապետի ժ/պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի քաղաքային համայնք, Ք. Մարտունի, Շահումյան 2
Հեռ. (0 262) 4 00 55, martuni.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2014 թվականի N 59

<<Սահմանամերձ գյուղերի ազատամարտիկներին օգնելու նպատակով Երկրապահ կամավորականների միության Մարտունու տարածքային բաժնին գումար տրամադրելու մասին>>:

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է

Մարտունի համայնքի 2014 թ. բյուջեի պահուստային ֆոնդից 1.000.000 դրամ փոխանցել ԵԿՄ Մարտունու տարածքային բաժանմունքի նախագահ Վաչիկ Գնորգյանի անունով բացված հաշվին՝ սահմանամերձ համայնքների ազատամարտիկներին օգնելու նպատակով:

Կողմ՝ 7, դեմ 0, ձեռնպահ 0:

Մարտունու քաղաքապետի ժ/պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Համայնքի ավագանիներ՝ Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի քաղաքային համայնք, Ք. Մարտունի, Շահումյան 2
Հեռ. (0 262) 4 00 55, martuni.gegharquniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2014 թվականի N 60-Ա

<<Դիմումների քննարկում>>:

ԶԵԿ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Մարտունի համայնքի 2014 թ. բյուջեի վարչական մասի <<Սոցիալական պաշտպանվածություն>> նախահաշվի 4729 հոդվածից Մարտունի քաղաքի սոցիալապես վատ վիճակում գտնվող ներքոհիշյալ քաղաքացիներին 260.000 (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ օգնություն տրամադրելու համար:

| հ/հ | ազգանուն, անուն, հայրանուն | գումարը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Գնորգյան Նաիրա | 30000 |
| 2. | Խաչատրյան Շողիկ | 10000 |
| 3. | Հարությունյան Երջանիկ | 20000 |
| 4. | Բեգլարյան Ռուզաննա | 10000 |
| 5. | Դավթյան Համլետ | 20000 |
| 6. | Շահումյան Խորեն | 20000 |
| 7. | Բադոյան Սիրանուշ | 10000 |
| 8. | Գրեյան Անահիտ | 10000 |

| | | |
|---|---|---|
| 9. | Գալստյան Հասմիկ | 20000 |
| 10. | Հարությունյան Քնարիկ | 15000 |
| 11. | Ավագյան Անահիտ | 15000 |
| 12. | Մանուկյան Վերգուշ | 10000 |
| 13. | Սարգսյան Օֆիկ | 20000 |
| 14. | Գուլեյան Անահիտ | 30000 |
| 15. | Խաչատրյան Կամո | 20000 |
| | Ընդամենը | 260.000 |

Կողմ՝ 7, դեմ 0, ձեռնպահ 0:

Մարտունու քաղաքապետի ժ/պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ